

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
12 սեպտեմբերի 2005 թ.  
Պետական գրանցման թիվ 10205366

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

8 սեպտեմբերի 2005 թ.  
ք. Երևան

թիվ ՔՀ-43-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթների իրականացումն ապահովելու նպատակով.

#### *Հրամայում եմ*

1. Հաստատել քրեակատարողական ծառայողների երդման կարգը (համաձայն հավելվածի):
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում ապահովել մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակված քրեակատարողական ծառայողների երդման արարողությունների կազմակերպումը:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2004 թվականի հուլիսի 12-ի «Քրեակատարողական ծառայողի երդման կարգը հաստատելու մասին» թիվ 101-Ն հրամանը:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Դ. Հարությունյան

Հավելված

Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարի  
2005 թվականի սեպտեմբերի 8-ի  
թիվ ՔՀ-43-Ն հրամանով

Կ Ա Ր Գ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՐԴՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում (այսուհետ՝ քրեակատարողական ծառայություն) առաջին անգամ որպես քրեակատարողական ծառայող պաշտոնի նշանակված անձը իրեն պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ փորձաշրջանն անցնելու օրվանից երկու ամսվա ընթացքում տալիս է երդում:

**(1-ին կետը լրաց 09.09.10 N 182-Ն)**

2. Քրեակատարողական ծառայողի երդման արարողությունը քրեակատարողական հիմնարկում կամ կենտրոնացված կարգով՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում կազմակերպում և իրականացնում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը կամ քրեակատարողական հիմնարկը:

**(2-րդ կետը լրաց 09.09.10 N 182-Ն)**

3. Երդման արարողության անցկացման ժամանակը սահմանում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կամ քրեակատարողական հիմնարկի ղեկավարը: Քրեակատարողական ծառայողը երդման արարողության ժամանակի մասին տեղեկացվում է երդման արարողությունից առնվազն երեք օր առաջ:

**(3-րդ կետը լրաց 09.09.10 N 182-Ն)**

4. Քրեակատարողական ծառայողը երդումը տալիս է մեկ անգամ՝ անհատական կարգով երդման տեքստն ընթերցելու միջոցով: Այնուհետև քրեակատարողական ծառայողը ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

5. Երդման արարողությունն անցկացվում է հանդիսավոր պայմաններում՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջև: Քրեակատարողական ծառայողը երդման արարողության ընթացքում պարտադիր կրում է իր ծառայողական համազգեստը:

6. Երդում տվող քրեակատարողական ծառայողը մոտենում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշին, բարձրաձայն ընթերցում է երդման տեքստը և ստորագրում իր ազգանվան դիմաց:

7. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կամ քրեակատարողական հիմնարկի՝ երդման արարողությունն անցկացնող պաշտոնատար անձը շնորհավորում է երդում տված քրեակատարողական ծառայողին:

**(7-րդ կետը լրաց 09.09.10 N 182-Ն)**

8. Տվյալ օրը երդման արարողությունն ավարտելուց հետո հնչեցվում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: